

բազմամեայ թախանձազին խնդրանաց և հետամուտ ջանից արդիւնքն է, որ մօտերս տեղւոյն Վրացի իշխանազունք հաճեցան նոյն գիւղի մէջ տեղ գտնուած վաղօրեայ իրենց պատկանեալ ամրոցը գրաւոր հաստատութեամբ ընծայել եկեղեցւոյն Հայոց, որ վեց հազար բուրլիէն աւելի արժողութիւն ունի։ Այս ամրոց տեղական բնակչաց պատմութեան նայելով շինուած է Վրացի իշխաններէն Վովկասային լեռնականաց Վրաստան յարձակման ժամանակը. ուր կ'ամրանայր ժողովուրդ նոցա ասպատակութենէն ազատ մնալու համար։ Ահա սորա յարմարաւոր և բաւական ընդարձակ տեղւոյն վերայ արգէն մտադիր են Հայազգի ժողովրդականք յորդորանօք և զխաւոր ձեռնարկութեամբ Սոյն Քահանայիս կառուցանել եկեղեցի և կից նմին մի եկեղեցական դպրոց։

Պիտի դոյ արդեօք այն ցանկալի ժամն, որ նահանգիս ամեն Հայարնակ գիւղօրէից բարեկրօն եկեղեցականներ ընդհանրապէս՝ այս և այլ սոցա նման օրինակներու հետեւելով, իրենց սրբազան պարտաւորութեան համեմատ աշխատէին միանգամայն իրենց հաւատացեալ հօտին մտաւոր և բարոյական զարգացման վերայ. ջանային շարունակել միշտ և անդադար քարոզութիւններով ժողովրդոց սրտին մէջ Հայկական լեզուի և ուսման ախորժակ տարրացնել. Գպրոց բանալու անձեռնահաս տեղերը, գէթ առտնին դաստիարակութեամբ Հայկազուն տղայքը և օրիորդները իրենց մայրենի լեզուով կրթել. որով ամեն վնասակար հետեւանաց առաջն առնելով, մեր ուղղափառ սուրբ կրօնը և ազգայնութիւնս պահպանել համաձայն կամաց Աստուածարեալ Վեհափառ Հայրապետի Ազգիս՝ Տ. Տ. Գեորգայ, Յուսով եմ որ, այժմ հասկացած են յիշատակեալ պատուարժան սրբադնազործ Հայրեր, թէ պճնազարդուց . . . պաշտօնի, կերակրոյ, բնակեաց մէջ փառք չ'ի որոնուիլ, այլ յօգուտ Ազգի և եկեղեցւոյ անկեղծ և ճշմարիտ գործունէութեան մէջ, Հասկացած են, որ իրենց պարտք ժողովրդոց կրօնական կարիք լցուցանելու հետ կից է և անբաժանելի, Հայկազուն անմեղ ուսումնակարօտ դասները Հայկական դաստիարակութեան կաթով սնուցանել։ Ընչուչտ եմ, որ մեր Վեհափառ Հայրապետի Գո-

րի տէր Ստեփանեանց տան դահլիճում սրտաշարժ ատենախօսութեան և պատկառելի հրամայողական Ազգաշահ պատուէրները ազրած պիտի լինին սոցա սիրտը, վերջացնել իրարու հետ օտար բարրառով խօսելու պախարակելի և վնասակար սովորութիւնը, որով յանձնէ օրինակ տալ ժողովրդեան, նախ առնել և ապա ուսուցանել, . . . կարծեմ որ վերջացած պիտի լինի սոցա մէջէն այն եպերելի ցանկութիւնն, որով աչ և այլ պատճառներով գիւղը թողուցած քաղաքը կ'վազէին պաշտօններ գտնելու, մինչդեռ բժիշկ հիւանդաց պէտք է և ոչ ողջոց, Յուսով եմ որ անհետացած պիտի լինի ոմանց և այն անհոգութիւն, որով կ'հեղգային երկու փոխասաց կամ զպիր տղայք պատրաստել եկեղեցւոյ համար, այլ պատարագի օրերը քաղաքի եկեղեցական դպրոցէն թախանձանօք մէկ երկու աշակերտ կ'տանէին, և օրերով նոցա ուսումնական դասից ետ մնալու առիթ կուտային։

Հաղորդելով . . . Խմբադրութեանդ այս մասնաւոր տեղեկութիւնները, կ'խնդրեմ հրատարակել պատուական Արարատ Ամսագրոյ միջոցաւ։

Մաղաք Պլուզիան։

Ի Ե - Ն Մ - յ : - Ի 1870 - Ի Դ  
 | S փ | u | u

**ԲԻԻԶԱՆԳԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԳԱԿԻ.**

Ապրիլ 11 ամսամուտով և 1208 համար Մանգուի մէջ կը կարդացուի, զի մերադնեայ Վսեմ՝ Նուպար Բաշայն՝ Բերայի դպրոցաց աղքատ տղայոց համար հանդերձներ շինել տալու զովելի նպատակաւ՝ հազար ֆրանկ ընծայած է։

Նմանապէս նոյն օրապրոյ մէջ 'ի լրոյ հրատարակուած է, թէ՛ Վսեմ. Յակոր կէֆէնտի Վեօ-չէեանցի կողմանէ Ս. Չատկի առթիւ՝ թէ՛ Հայ և թէ՛ Հոյ—Հոովմեական աղքատացնութիւնու և բաժանուած է հաւ՝ եղ և բրինձ։

Ապրիլ 21՝ համարաւ 129 Երեւանին մէջ հրատարակուած է 'ի լրոյ, զի Հոովմեականաց Ս. Յակորայ հիւանդանոցը Ունիթոսք (Հասունեան

Պապականք) զրաւած լինելով, ազատ—Հոռով.—  
Ազգայինք մեր Պօլսոյ Հայոց Պատրիարքարանի հա-  
ձուժեամբ՝ իւրեանց ազքատ հիւանդները և ազ-  
քատները՝ Եէտի—Գուլէի Ս. Փրկչեան հիւանդա-  
նոցը կը խրկեն եղած:

Ապրիլ 6 ամսաթուով 132 համար ԵՊՀԻ մէջ կը կարգացուի, թէ՛ ՚ի Հոռով՝ գտանուող արեւելեան Հայ—Հոռովմեական հոգևորականներէն 30 եպիսկոպոսուները ՚ի Պօլիս վերադարձնել տալոյ համար (ի հարկէ ազատելով մարդ—աստուած Պապի բռնարարութիւններէն և զրկանքներէն), ՚ի 5ն նոյն ամսոյ Բերայի կազատ—Հոռովմեայոց Ս. Յ. Ոսկերեան եկեղեցւոյ մէջ ժողովողեան կողմանէ ստորագրուելու աղագաւ անուանց տետրակ բացուած է, զոր Բերայի ազատ հոռովմեականաց ամենքը ստորադրած են:

—Ս. Զատկի տօնին առթիւ մայրաքաղաքիս ազգային մէկ քանի վարժարանաց հոգարարձութիւններն ազքատիկ աշակերտաց և աշակերտուհեաց ձրի հանդերձ շինքը են թէ հանգանակութիւն ընելով և թէ Բձաղ. Մնտուկներէն առնելով:

Այսպիսի բարի ձեռնարկութիւնները միշտ շնորհակալութեան արժանի են:

Երևան Թիւ 154

—Չորեքշաբթի օրը ծանուցինք Արմաշի վանաց Միաբաններէն Փափազեան արժ. Ստեփան վարդապետին Եզրիպոս հանգանակութեան երթալու պատրաստուիլը: Աստուգեմք թէ այս հանգանակութեան արդիւնքը զխաւորապէս վանքին մէջ արդէն հաստատուալ ժառանգաւորաց զիշերօթիկ վարժարանը ընդարձակելու պիտի գործածուի, այսինքն փոխանակ 20ի չափ աշակերտունենալու, 40 և աւելի ունենալ, և հետևարար առ աւել ևս ծառայել ազգային յառաջադիմութեան համար:

Արիւնքիմք որ այս վարժարանին մէջ թոշակաւոր աշակերտք ալ գտնուին: Փոխանակ 40-50 լիբայի՝ 20 և թերևս աւելի նուազ տարեկան վարձ կրաւականանայ, տեղւոյն այլ և այլ յարմարութեանց և մասնաւորապէս աժանութեան

պատճառաւ: Պատուարժան Միաբանութիւնն սլ՝ որ արդէն իւր ներկայ անձուկ վիճակին մէջն ալ ազգօգուտ աշխատասիրութեամբ հասարակաց համակրութիւնը յինքն զրաւած է, — կրնայ ըստ ամենայնի գոհ ընել ուսումնասէր ծնողքը, անոնց որդոց ուսումնական զարգացման ու կրթութեան բարւոք խնամ տալով և դարձեալ իրրև Հայ . . . ետ դարձունելով: Այս փափաքով կենդրինք վանական կառավարութեանն որ վարժարանն այս արամադրութեան մէջ զնէ:

Այսինք թէ ձեռնահաս և ուսումնասէր ազգայնոց ոմանց կողմանէ փափաքանօք առաջարկութիւն եղած է արժ. Ստեփան վարդապետին, յանուն Արմաշի վանաց զիշերօթիկ վարժարան մը հիմնել մայրաքաղաքիս մէջ, և խոստացել են բաւական թուով թոշակաւոր աշակերտ տալ: Այս առաջարկութեան վրայ վանական վարչութեան ուշադրութիւնը կհրաւիրեմք, միանգամայն զիտելով թէ պէտք է Արմաշի վրայ հասարակոց ունեցած այս տարապայման համակրութեան համեմատ վարուիլ ըստ ամենայնի:

Փուխ Թիւ 539

ԱՌ ՀՌՈՎ ՄԷԱԿԱՆ ՀԱՅՍ

Հայաստանեայց եկեղեցւոյ արարողութիւններն ԱՆԻՍԱԻՏ պահելու նախանձախնդիր, և անոր հաւատարիմ՝ աւանդապահութեամբը պանծալու յուսալիր եղող հոռովմական Հայ ժողովուրդը Աւետման տօնը որ եկեղեցւոյ զրութեան համեմատ կը կատարէ:

Խնդիրն ո՞ր գնաց, վէճերնիդ ո՞ր մնաց, յաղթութիւնն որո՞ւ մնաց . . . . մարտ 25 գնաց: ապրիլ 7 հետուն մնաց . . . .

Այն որ միամտաբար կը տքնի իւր վիզը հանդիստ կերպով տեղաւորելու այն լուծին մէջ, որ ըստ ինքեան դառն է, որչափ զթոց արժանի է. հապա քանի՞ առաւել զթոց արժանի՝ երբ այն լուծն ալ խիտ առ խիտ փուշերով զարդարուած ըլլայ գոգցես տէրը խթելու աշխատութեանն աղատելու համար:

Եթէ ներքի է նմանցնել, այս վիճակը հոռովմեական Հայոց վիճակն է: Բայց ինչո՞ւ չը թոթվիլ այս գառն լուծը և ծանր բռն՝ ու տեղը քաղց-

րէն ու փոքրոզին չը կրել.— ՂՊագ պախ եկեղեցւոյ ճանչելու համար.— թերեւս

Մ.

Օրոպիր թիւ 145

—Անցեալ շաբթու մէջ լսած կինք, որ կայսերական բարեխնամ կառավարութեան հրամանաչորս Օսմանցի, չորս Ազատ Վաժմուխի Հայ և չորս ուլ Աւնիթու հայեր, ընդ ամենը 12 հոգի մայրաքաղաքէ դէպ ՚ի Հոռով ճամբայ ելեր են, Հասունեանի Պատրիարքական արքունի հրովարտակր առնել բերելու համար

Այս շաբթու մէջ Հոռովն մայրաքաղաքս եկած հեռագիր մը կը ծանուցանէ, թէ այս 12 անձերն Հոռով հասնելով կայսերական հրովարտակր դեր. Հասունեանի ձեռքէն առեր են և քիչ օրէն մայրաքաղաքս կը հասնին:

Գրածան թիւ 123

—Արտուի թէ Հոռովն ուրիշ հեռագիր մ'ալ եկած է որ կը ծանուցանէ, թէ Պապն որոշեր է որ Հասունեան այլ ևս Պօլիս չը դառնայ և հետևաբար Բրորականտայի կողմանէ Վաժմուխական տեղապահ մը պիտի ղրկուի մայրաքաղաքս:

Նոյն:

—Հոռովական ազգայնոց ոչ միայն արանց, այլ և կանանց մէջ Հասունեանի և Հակահասունեանի վէճը այս օրերս բոլորովն սասոկացած է: Այսինքն թէ մեզ օրերս Պեյօղլու բաղնիքի մը մէջ յայ երկու կուսակցութենէ եղող կանանց մէջ սաստիկ բանակիւ մը ըլլալէն յետոյ՝ բոլորովն կռուի փոխուեր է . . .

Փունջ թիւ 344

Լսածնուս նայելով Հոռովն առնուած հեռագիր մը կը ծանուցանէ, թէ Բրորականտա կ'սպառնայ եղեր Հոռովի մէջ գտնուած Անտոնեան հայկաժողիկ կրօնաւորաց վանքը գրուել, և լափնահանութեան դէմ ըլլալու կասկած տուող եպիսկոպոսները բանտարկել:

Եթէ այս լուրն ստուգուի, տարակոյս չկայ որ Հայ—կաժողիկ սոցալիսթ բրուացի ծանր դանդաճի պատճառ մ'ալ կ'անհետն, որու համար իրաւունք պահանջելու գործը՝ Բ. Գրան կըմնայ ՚ի

պաշտպանութիւն իրեն հպատակ հասարակութեան մը:

Մասիս թիւ 364

Զ.Գ.ԱՅՄՈՒՆ.Բ.Ա.Ա.Տ.—Հ.Ռ.ՈՎ.Մ.Է.Ա.Վ.ԱՆ.Մ.Ա.Ն.Կ.Ա.Ն.

Նուաստ տան և երկու տարեկան տղայ մը, հազիւ թէ բանականութիւնս ստացայ, իմ ծնողքքս և ուսուցիչքս ինձի տուած բարի կրթութիւններովն բորբոքեցին սրտիս մէջ Քրիստոսի սուրբ հաւատքին և հայրենասիրութեան սէրը, որ հիմն է մարդկային բարեկեցութեան և յառաջդիմութեան յուսաննս գիտութեան: Արդ ստոյգ է, անոնք որ, սրտերուն մէջ պայտիս անչէջ հոգ կը տածեն, կը վառեն նաև ուրիշ սաստիկ հնոց մը, որ է աստիւթիւն աս միբոյն թշնամեաց դէմ: և հիմայ այս երկու սաստիկ զգացմունքները սրտիս մէջ դրոշմած են, և պիտի մնան ՚ի յաւիտեան:

Արդ ո՞վ է այս օրս և այնքան ժամանակէ ՚ի վեր այս սիրոյն թշնամին, հետևաբար մարդկութեան օխերիսը, ոսնակոյն Քրիստոնէութեան և Ազգութեան:

Ասի, ամեն ազատամիտը գիտեն որ, Հոռովն է, Պապն է, Բրորականտայն է, քիով բանիւ զարշնչի ճիզգիթութիւնն է, որն որ արևանարբու վազրէն շատ աւելի վայրագ, տակաւին չզարդեցաւ, մինչև խեղճ մարդկութեան այլքներն անգամ կեղեքեցէն, Հոռով՝ որը անօրէնութեանց ինքզինքը Քրիստոնէութեան կեդրոն ցուցնելով, բարբարոսներէն հարիւր անգամ աւելի չարքարեց խեղճ քրիստոնեաները: Անխտ, ցընթած, խրֆած, խորշոմած, երկարատև ճիզգիթութենէ այլքներն երկաթ կարած ծերուկներ, օձի պէս սողալով, եկան բազմեցան Պետրոս առաքիլոյն սուրբ աթոռին վըրայ, և զանի իրենց արիւնալից վերարկուովս պղծեցին բաւական չի սեպիլով, մինչև (ո՛հ օձիբանլուր) Քրիստոսի սուրբ խաչը, իրենց ոտից վըայ կրեցին, Հոռով շատ լիճեր և գետեր կազմեց քրիստոնեայներուն արևամբը Հոռովնայ սուր թրոյն բերնէն շատ սուրբ եպիսկոպոսունց և նահատակաց գլուխները տասպատ անկան, և ցատկուտելով պապերուն ոտքերը արիւնտեցին. Հոռովնայ ստորեկ-

րեայներուն մէջ շատ խեղճներու գիտնները փրատեցան, և վերջապէս երկիր չի մնաց յորում Կրօնովի կամ թէ բսնեք ճիգովի թու թեան աշխարհակործան հուրը չի մտնէ, և մինչև այս օրս լուսաւորեալ գարուս մէջ կը տեսնենք որ Պիոս Բ. որ մինչև իւր բարեկամները ճանաչելու կարողութիւն չունի, կուզէ ինքզինքը անտալական, սպիւնքն, իրրև հիններն Բել, զինքը երևելի երկրիս տատուածը հրատարակել, ու կը տեսնենք նաև առ հասարակ անկողմնակից արքեպիսկոպոսաց և եպիսկոպոսաց ու քահանայաց վրայ ըրած բռնութիւնները, նաև Ստեփաննեան վարդապետը բարաննել տալ ուղելը ինչպէս նաև շատ լրիշներն ալ, Սակայն քաջ գիտնեք որ մեր առաջին նահապետը Հայկ չի թողուց Բելայ՝ որ իր գոռոզ բաղձանքը կատարէ, Հայուն մերկ բազուկը, թէպէտ և արիւնաներկ և վերաւոր, բայց երբէք չթուշար, և որովհետև Հոռով իւր բռնութիւններէն ետ չկենար, պարզութիւն թո՛ղ, դէմ առ դէմ, լատինութեան պատական գունատ և նիհար գրոշները, և Հայութեան քրիստոնէական անմահ գրոշակները, և թո՛ղ նիզակազէն Լատինն տեղի ապ խաչազին Հայուն:

Օ՛ն առաջ քրիստոնէայ Հայք, և Օ՛ն առաջ բարբարոս Լատինք. Ե. Թ.

Մանգրուլ, Թիւ 4209

**Հ Ա Ռ Վ Մ Է Ա Կ Ա Ն Ա Ձ Գ Ա Յ Ի Ո Յ Վ Է Ծ Ը**

Անցեալ շարժու հրատարակուած "Բլիւիմ ի Կ. Պօլիս կամ Արևելեան Հայք և Բրօքականտա" վերնագրով տետրակին վրայ քանի մը խորհրդածութիւն ընել խոստացեր էինք. ահա այս անգամ կը կատարենք: Տետրակին հեղինակը, որ ուրիշ կողմանէ խնդիրը կրցած է ամենամեծ ճշգրութեամբ նկատել, Գեր. Բլիւիմի պաշտօնին մասին կը սխալի: Կը կարծէ թէ Հոռով կաթոլիկ ազգայնոց բողոքները իւր փետր. 18 հետագրով "դատապարտելի" և "անլսելի" վճռելէ ետև, հակասութեան մէջ ինկած և ՚ի հարկէ բռնադատեալ, յակամայս ՚ի զիջողութիւն խոնարհեալ Գեր. Բլիւիմին ՚ի Կ. Պօլիս ղրկեր է, որպէս զի ունկնդրութիւն տայ իւր հերքելի և դատապար-

տելի համարուած ժողովրդեան զանգատանաց և բողոքին: Ա՛յ, Լատին Մօնսիներոն ասոր համար ղրկուած է, այլ ինչպէս տեսնուեցաւ, հնազանդութեան հրաւեր կարգալու, ժողովրդեան հասկցնելու թէ, ըրած բողոքները դատապարտելի են, և ջանալու, որ անոր զլուխ կեցող կղերն եկեղեցական պատժոց սպառնալեօք ժողովրդէն բաժնելով, ժողովրդական կուսակցութիւնն անղլուխ մարմին մ՛ ընէ:

Իսկ բուն ինգրոյն գալով, Տետրակին հեղինակը մեծ ճշգրութեամբ կրնէ իր դատաստանը, և նոյն եզրակացութեան կը հասնի, զոր մէք ալ ասկէ յառաջ յաճախ յեղիցած ենք: Ասթուլիկ ազգայնոց մէկ մասը կը կարծէին նախ թէ Հոռով յանցանք չ'ունի և Գեր. Հասունն է միայն որ իրենց ազգային եկեղեցական իրաւունքներն անոր կը յանձնէ: Աւստի իրենց այնպէս կ'երևէր, որ եթէ առ Հոռով բողոք բառնան, նա իրենց իրաւունքը կը վերադարձնէ: Բողոք բարձին, բայց Հոռովն ո՛չ միայն իրենց ակնկալութիւնը չ'կատարեց, այլ Գեր. Հասունի բողոք արարքն ի վաւերացնելով, խստութեամբ և եկեղեցական պատժոց սպառնալեօք դատապարտեց իրենց բողոքները: Այն ատեն շատերուն աչքին բիժը սրբուելով հասկրցան՝ թէ իրենց բուն թշնամին Հոռովն է, թէ իրենք սուրին դէմ կը կուռէին, և ոչ սուրը շարժողին դէմ, ինչպէս որ ազդու օրինակաւ մը կ'ըսէ տետրակին հեղինակն ալ: Հոս իր խօսքերն այնչափ մեր ասկէ առաջ գրածներուն ճշմարտութիւնը կը հաստատեն, որ արժան կը համարինք զանոնք մեր ընթերցողաց աչքին առջև դնել:

Այո՛, չխարենք զմեզ և չխարստինք. Հասունը չէ մեր բուն հակառակորդը, և մեր բուն խոսվարարը, այլ Բրօքականտայն է: Ազգին աղետից պատճառ ցարդ ոչ թէ Հասունն է, այլ Բրօքականտայն, անոր հակազգային ողին է, անոր Լատինականութեան տարածիչ ողին է, անոր ՚ի բազմաց հետէ երկնած Վատուածպետական միահեծան իշխանապետութիւնը, որուն մէկ ոտքը յարևմուտըս հաստատելէն վերջը, երրոր սկսաւ յոգնել ու տկարանալ, սկսաւ արդ դէպ Արևելս յենուլ: Հասունը Հոռովնայ կամաց դրոժիք է, և ոչ այլ ինչ: Հասունին հետ հակառակելով և Հասունը

վերնալով՝ գործիքը վերուցած կ'ըլլանք, գործիքը շարժողը վերուցած չնք'ըլլար: Հասուն գործիքը դիւրին է աներևոյթ ընել՝ կարմիր ծիրանւոյ մը տակ զինքը ծածկելով, բայց գործիք շատ Բանի որ շարժիչ պատճառը կեցած է, թէպէտ և Հասուն ՚ի չիք գառնայ, կոխը պիտի շարունակէ, Հասունը վերցուի նէ, տեղը Առաքելեան մը կուգայ. Առաքելեանը վերցուի, Բլիշիմ մը կուգայ. վերջապէս ետեւէ ետե կուգան ու կուգան, ամենն ալ՝ մէկը խիստ կերպով, և մէկը կակուղ կերպով՝ նոյն ազգակործան սկզբանց հաւատարիմ պաշտօնեայք: Բանի որ այս շար և ամենայն իշխանութիւններու թշնամի սկզբունքը տիրած է ՚ի Հոռով, և մեր վրայ մասնաւոր կերպով կ'ուզէ բռնանալ, ոչ մէք, ոչ մեր որդիքը, ոչ մեր թոռները, և ոչ մեր եօթը պորտը խաղաղութիւն տեսնալիք ունին . . . . .”

Վերջապէս տետրակը կ'եղրակացընէ յորդոր կարդալով ժողովրդեան, որ լատին Մօսինեօրին խարէական քաղցրաբանութիւններէն չ'խարուի, և Հոռով սօն—Բօսումուսին դէմ, ինքն ալ իւր սօն—Բօսումուսը դնէ: Կրնանք ըսել թէ այս է նաև ճիշդ՝ ժողովրդական մասին ընթացից ծրարիքը, ուրիշ կրնայ հասկցուիլ թէ ընաւ զիջում չ'պիտի ընեն:

Իսկ Հոռով ՚ի նչ պիտի ընէ. ասոր պատասխանը նոյն իսկ անդրադեռնական լրագրաց մէջ կը գտնենք. Սէտայի միջնադարեան յայտարարութիւններն արդէն յայտնի են. Տեսնեմք թէ անոր մեծ եղբայրը Իւնիվէռ ալ՝ ՚ի նչ կ'ըսէ:

”Հետեաներն հազիւ ինն հարիւր հոգի կան, կ'ըսէ Վէշլեյի թերթը, բայց այս խմբակը տարմ մը կը կազմէ: Իրենց զուխները, որք մեծ մասամբ կասկածելի քրիստոնեայներ և յայտնի Քրան—Մասօններ են, ապստամբական շարժմանց համաձայնութիւնն ունին. Իրենց զոհողութեամբքը—քանզի բոլորն ալ հարուստ մարդիկ են—կուսակցութիւն մը կազմած են. Ամեն զուռ զարկին, Հայաստանի չորս կողմերը լրտեսներ զրկեցին, հրատարակութեան գործարան մը հաստատելով՝ Կ. Պօլիս և Եւրոպա սուտ լուրերով և բացազանչութեամբ լցուցին: Իրենց կատաղութիւնն այնչափ աւելի մոյեգին է Գեր. Հասունի գէմ, որ-

չափ որ կը վախնան անոր մեծ հանճարէն և առաքինութեանց փայլէն. Անցեալ կիրակի Ս. Յօհան Ասկերերան եկեղեցւոյ մէջ. պատարազի կատակերգութեան մը ներկայ գտնուելով (ըսել կ'ուզեմ արգիւեալ քահանայի մ'ըրած պատարազին) զմայլելով քարոզ մը լսեցին, ուր մեծանուն և սուրբ ծերունին (այսինքն Գեր. Հասուն) կատարի շան մը կը նմանցունէր: (1) ”

Աւստի տարակոյս չ'մնայր, Հոռովի առջև Գեր. Հասուն ”մեծանուն և սուր ծերունի” մ' է, առաքինութեամբ և հանճարով լի. իսկ անոր հակառակորդները հետեալ են, կասկածելի քրիստոնեաներ են, Քրան—Մասօն են, ապստամբ են, սրտախօս են, և այլն և այլն. Հոռով քանի որ ժողովրդական մասն այսպէս կը համարի, անոնց զիջում կ'ընէ. —Երբէք. հետեւաբար երկու մասին բաժանումը կատարեալ իրողութիւն մը կ'ըլլայ:

Իւնիվէռի զրպարտութեանց դէմ Աէվընթ—Թայմզի մէջ ”ջերմեռանդ Աթոլիկ մը” ստորագրեալ նամակ մը կը տեսնենք. բայց այսօրուան թուով տեղ չ'ունենալնուս պատճառաւ թարգմանութիւնը հետեւեալ թերթերնուս կը թողունք:

Մասիս Թիւ 957

ԳԵՐ. ԻՆՖԻԷՃԵԱՆ ՀԱՅՐ ՍՈՒԲԲԻ ԲԵՐՈՉԸ.

Գեր. Ինֆիէճեան երէկ առաւօտ (պար. 10) Ս. Ասկերերան եկեղեցւոյ մէջ ժամ Չին քարոզ խօսեցաւ:

Քարոզին նիւթը զուտ կրօնական և երեք մասի բաժանեալ էր. սատուծոյ առ մարդկային ազդունեցած սէրը, մարդոց առ քրիստոս ըրած անիրաւութիւններն, և վերջապէս աստուածային արդարութեան կատարումը. այս երեք մասերը խիստ ընտիր և ազգու կերպով բացատրեց. քանի քանի անգամ կրկնեց քրիստոսի զուխ եկեղեցւոյ ըլլալն. բաւական ազգու խօսեցաւ. Հրէից քահանայապետաց Քրիստոսի ժողովուրդէն զտած համակրութենէն նախանձելով՝ Քրիստոս Մովսիսական օրինաց հա-

(1) Չներ յուսար Թէ այսօրիսի նմանութիւն մընող եղած ըլլայ եկեղեցւոյ բեմին վրայ, և Իւնիվէռին վերի խօսքը մտի զուտ զրպարտութիւն կը Թուի:

կառակ քարոզելուն և յանուն կրօնի ժողովուրդը գրողներուն, չորս օր առաջ մի և նոյն ժողովուրդէն արմաւենիներով պսակեալ քրիստոսը՝ քահանայապետաց զրդմամբ չորս օր ետքը փուշերով պսակուելուն վրայ. նաև նշանակութեան արժանի կերպով խօսեցաւ քահանայապետ դատաւորաց՝ մտնալով դատաւորական անաչառութեան պարտաւորութիւնին՝ քրիստոսի անձամբ դատախազ կանգնելուն վրայ. բայց ի՞նչու երկարներ, փոխէ Յուդա բառը՝ Հասունի, Հոուլմայեցի Պիղատոսը՝ Պիոս Գրդ. ի, Հրէից քահանայապետը՝ Բլիւմի, 1870 տարի առաջուան քրիստոնէութեան դատը՝ 1870ի հայութեան դատին, և ահա առջևդ պատկերացեալ կը տեսնես՝ հռովմէական ազգայնոց ներկայ դատին սկզբունքներն. թէպէտ և ինքը բնաւ բերնէն չը հանեց Հասուն, Պիոս, Բլիւմ՝ և այս տեսակ բռնոր, նաև բնաւ չը մտաւ ներկայ խնդրոյն քննդատութեանը, բայց մի՞թէ վերացական իմաստը անհատական բառերէն կախեալ է:

Եկեղեցին գրէթէ բնաւ պարագ տեղ մը չիկար 5-600 էն աւելի իգական սեռէն և նոյնչափ մ'ալ և աւելի երիկ մարդիկ կային:

Լեզուն խիստ ընտիր հայերէն էր և բնաւ տաճկերէն բառ մը չարտասանեց, այսինքն՝ պապական վարդապետաց պէս՝ Վասմեթի լեզուով ըզ-Քրիստոս քարոզելու՝ Հայկայ լեզուաւ քարոզեց. միայն եթէ կրնորէ մեզ ըսիլ՝ փոխանակ Հայկայ պարզ ձևովը քարոզելու՝ լատիններու շփոթ և խափուսիկ ձևովը քարոզեց, գուցէ ժողովրդեան սովորութեանը Հայկական անշփոթ և պարզ ձևն զո՛հ տալով, բայց տակաւին աններելի է:

Քարոզիչը Հայ էր, ժողովուրդը Հայ, կարգացուած երգերն հայերէն, խօսուած խօսքերն հայերէն, խաչելութեան սեղանին տակը գրուած տառերը հայերէն, գանձանակաց վրայ փորուած զիրերը հայերէն, վերջապէս բաց ի պապէն շատ բան հայ կը հօտեր, իսկ պապ մը՝ մարդաստուած մը, չար մը՝ անիրաւ մը՝ մտոր է մէջերնիս, և մեզ իր օտար իրարու երես նայել կուտայ. իսկ հոգ չէ, վասն զի հեռու չէ տեսնել այն օրը՝ որ իրարու խօսք հասկնալով զո՛ւրս զո՛ւրս պօռանք այն դայլին դէմ՝ որ գառնուկի զգեստով մեր հօտը կը

զիշատէ այսօր. վասն զի ունեցանք այն բաղդը՝ որ տեսնանք 6-700ի մօտ կանանց հայերէն լեզուով քարոզ լսելին, Հայկական պատերազմին զինուոր գրուելին՝ և պապին ու ըլիւմիս անիրաւ րանադրանքը կոխկոտկոլով՝ արհամարհելով և անարդիւով արձակ համարձակ՝ Ս. Յօհան Ոսկեբերանի կախակայեալ եկեղեցիէն ներս մտնելին: Գեր. Հասուն, ատոնք ժամանակաւ քու զինուորներդ էին, իսկ հիմայ երես դարձուցին քեզ, լաւ մտածէ՛ վիճակիդ վրայ և միտքդ բն'ր այն սպարապետներուն վիճակը՝ որոնց զինուորներն իրենց երես դարձուցած են. բայց ինչ ալ ընէ խեղճը, հիմայ Բուլ ալ ըսելու ըլլայ՝ իրեն մեղային հաւատացեալ չիկայ:

Օրագիր Թիւ 113

— Երէկ (մայիս 1) Թրիէստի շոգնեաւով Հոուլմէն Մայրաքաղաքս հասան Տիգրանակերտի Արքեպիսկոպոս Գեր. Յակոբ Ա. Պաթմիարեան և Հ. Ստեփաննոս Ա. արքայապետը:

Ահաւասիկ Արեւելեան Վաթօղիկ ազգայինք իրենց գոզն ունեցան հայրենի աւանդութեանց նախանձախնդիր բարձրաստիճան կղերական մը՝ որն որ առաջին անգամ արիարար շահատակեցաւ Հոուլմի մէջ անխալականութեան խնդրոյն դէմ, և բիւր հալածանաց տոկալով, շտորագրեց մարդաստուածացնելու թուղթը, և վերջապէս այսօր ողջամբ իր սիրելի ժողովրդեան զիրկը հասաւ զանոնք ի հոգևորս մխիթարելու և սիրտիւր համար:

Մամուլ Թիւ 73

ՃԼՈՒՆԻՕՍՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ Հայ լրագրաց մէջ ծանուցուած էր, 1870 ապրիլ 30 հինգշաբթի երեկոյ Բերայ Անգղիական ուսումնական և գրագիտական Թանգարանը Մեծապատիւ Վարապետ Էֆէնտի Յակոբեան՝ բնիկ Մարտրվանցի Հայ ազգի ուսումնական երիտասարդը, Անգղիարէն լեզուաւ ճառ մը խօսեցաւ, որուն նիւթն էր Հայաստան և նախկին Հայք. Մեծապատիւ ուսումնասէր երիտա-

սարդը Հայկեանց ցեղին ծագումէն առնելով ազգային պատմութեան ընտիր ամբողջում մը, շատ զեղեցիկ և ամենայարմար կարգաւորութեամբ մը շարագրեր էր՝ հանդերձ նշանաւոր և երեւելի անցից իրարու և ուրիշ՝ ազգաց և տէրութեանց հետ ունեցած յարաբերութիւններովն, և այն և այն իր բնական և անարհեստ շարժումները և մարտութեան յստակ ոճը՝ ալ աւելի հաճելի և սիրելի ըրին ունկընդրաց իւր աւանդած ազգային պատմական ճշմարտութիւնները: Ինքը մէկ երկու Անգղիացի և Գարդիացի հեղինակներէ համառօտ քաղուածները բրած էր Հայոց ազգին վերաբերեալ, որ շատ աղբու ապացոյց եղած էին իր ներկայացունելուն: Բանը ամբողջութեամբ առնելով հաւաստի ենք որ շատ ազգու և օգտակար տպաւորութիւն մը ըրաւ օտար ազգի ունկընդրաց վրայ, ինչպէս որ մեր Համազգեացս վրայ:

Յիրաւի շատ հաճելի և սրտաշարժ տեսարան մի էր Հայ սրտերու համար: 20—25 տարեկան գաւառաբնակ աղքատիկ ըայց ուսումնասէր Հօր զաւակ երիտասարդ մը, որ միւսյն Պօլիս մայրաքաղաքը տեսած է, անկէ անդին չէ անցած, կենաց օտարազգի ունկընդրութեան մը առջև և առաջին անգամը ըլլալով օտար լեզուաւ ազգային ճառ մը խօսի, ճառ մը որ ամենէն՝ կրկին ծափահարութեամբ զովաբանուի: Երեսուն քառասուն տարի առաջ մարդու մտքէ անգամ չէր անցնէր: Աւարտման ճառին Անգղիոյ զեպանատան մատրանապետ Պատուելի. Պրիպլըլ՝ որ հանդէսին նախագահն էր, հանդիսականաց շնորհակալութեանը թարգման լինելով, զովաբանական համառօտ ըայց ազգու ուղերձ մը ըրաւ և ծափահարութեամբ վերջացաւ հանդէսը:

Գիտակ. Մայիս 6:

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԻՆԷ**

Վ. աղբուսաժի յարագրութեանց ինքնօրէն  
 Մայիս 4.—Արժ. Յակոբ Ա. արդապետ տէր Աւետիքեանց կարգեցաւ Վանահայր ՚ի Վանս Ս. Թովմայի Ազուլեաց՝ ՚ի տեղի Արժ. Ստեփաննոս Ա. արդապետի. որ և ստացաւ Ս. Աթոռոյն առնանոցի Աւրաստեւութեան պաշտօնը:

„ 8.—Ի յարգանս Թախանձանոց տիանաւոր ժողովրդականաց Համախոյ և ըստ միջնորդութեան Հոգևոր Տեսչի վիճակին Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոսի՝ Իօրոյէլ Գահանայ Սարգիսեկեանց՝ որ Հ. Եշմանութեան հրամանաց ընդդէմ վարուելով ընդդիմացած էր օրինաւոր տնօրինութեան նորին, ուստի և արգելեալ էր խալատ Գահանայագործութենէ, թողարեցաւ կրկին վարել Գահանայագործութիւն և միանգամայն ընդունեցաւ զգուշութեան պատուէրներ՝ միւսանգամ չ'մտահանալ իշխանութեան կամաց հակառակելու համար երկնելով խտտաղոյն պատժոյ ենթարկուելէն:

„ 8.—Արժ. Արթմանէս Ա. արդապետ՝ ըստ խնդրանաց իւրոց արձակեցաւ Կարմիր վանուց վանահայրութեան պաշտօնէն. և ՚ի տեղի նորին վանահայր կարգեցաւ Անդամ Հ. Կառապարտութեան Տաթևու Արժ. Ներսէս Ա. արդապետ Նա և ՚ի տեղի վերջնոյն՝ Տաթևու Հ. Կառապարտութեան անգամ նշանակեցաւ Բարեկ. Սիմէօն Գահանայն Աւստափօլեանց:

„ 8.—Հ.—Նախիջևանայ վիճակին Յղնայ գեղջ Բարսեղ և Ստեփաննոս Գահանայքը՝ որք Ծայրագոյն—Հոգևոր իշխանութեան կողմանէ իւրեանց վերայ եղեալ յանձնարարութեանց կատարման խոչնդոտ կացած են, մի ամիս հրաժարեցուցանելով ՚ի Գահանայագործութենէ՝ ՚ի ներքոյ պատժոյ արկանելոյ, և ՚ի նոյն միջոցի՝ առ զրան Ակեղեցոյ տեղոյն առանց փիլոնի ապաշխարել պարտաւորեցուցանելոյ աղագաւ՝ Երևանայ Թեմական Ատենին լուծումն տրուեցաւ ՚ի խրատ նոցին առյապայն և ՚ի զգուշութիւն այլոց:

„ 28.—Աստրախանայ Թեմական Ատենին լուծումն տրուեցաւ՝ Սարկաւազ Յովհաննէս Պոպովանցին և Գպիր Պետրոս Լազարեանցին Յկեղեցոյ մէջ զմիմեանս արհամարհելով հակաքրիստոնէական վարմանց և գործոց աղագաւ՝ իւր ենթադատութիւնը ՚ի կատար անելոյ միայն նոյն կրկու յանցաւորաց ապաշխարութեան ժամանակը վեց ամիս սահմանելով: